

VI

ԳՐԱՏՈՒՆ ԵՒ ԶԱՆԳՎԱՏՈՒՆ

Գաւթի հիւսիսային որմին կից գտնւում է մի խորանաձև կամարակապ շէնք, որ գաւթիքը միացնում է զանգակատան հետ. այս խորանաձև մուտքի աջակողմեան պատի վրայ կան երեք կամարներ. մէջ տեղի կամարի մէջն է զանգակատան մուտքը, իտրանաձև մուտքի երկարութիւնն է 13 արշին 4 վերջուկ. լայնութիւնը 2 արշին 10 վերջուկ. բարձրութիւնը 5 արշին: Մուտքի տրամեան կողմը որմով պատած է, բայց պարզ երևում է, որ այդ պատը վերջին ժամանակների գործ է:

Զանգակատան պատերի ստորին մասերը 4 արշին 10 վերջուկ բարձրութեամբ շինուած են ոչ սրբատաշ քարից. պատերի մէջ զրուած են ահաղին մեծութեամբ ժայռի կտորներ. այնուհետև սկսւում են մաքուր, սրբատաշ քարից շինուած մասերը, որ անխախտ ու ամբողջ են մնացել. միայն կուտրի վերին մասն է խախտուած:

Զանգակատունը բաղկացած է մի քանի յարկից. ստորին յարկը, որի մուտքը միջանցքի կամարի միջիցն է, առանձին ու ինքնուրոյն ճարտարապետութեամբ է շինուած: Զանգակատան ներսի կազմակերպութիւնից երևում է, որ այստեղ իսկապէս երկու շէնք կայ: Զանգակատան բարձր կամարներից ցած շինուած է մի գմբէթաձև տանիք, որ կանգնած է կիսասիւնների վրայ. այս կիսասիւնները չորս անկիւններում զոյգ զոյգ իրար հետ միանալով կազմում են փոքրիկ եռանկիւնիներ, Եռանկիւնիների մէջ մնացած մութ տարածութեան փոքրիկ տանիքները քերութեամբ զարդակ են. այս ութը կիսասիւնները շէնքի պատերի մէջը չեն, այլ ուղղակի կցուած են որմերին: Շէնքի այս կազմութիւնից երևում է, որ զանազան նպատակների է ծառայել. ստորին յարկի որմերի մէջ եղած մեծ դարանները ցոյց են տալիս, որ այս յարկը եղել է գրադարան կամ գրատուն: Դարաններից մէկի մէջ, հիւսիսային պատում, անց է կացրած մի խողովակ. երեք վառարան է եղել այդ տեղը:

Մեր ենթադրութիւնը, որ այս քեղեցկաքանդակ շէնքը գրադարան պէտք է եղած լինի, հիմնւում է նոյնպէս կիրակոս պատմագրի այն տեղեկութեան վրայ, որ Մարտիրոս Խաչնուորդը—Գոշի անմիջական յաջորդը—ի միջի այլ շէնքերի, շինել տուեց և մի

«գրատուն զեղեցկաւն յարկոք¹⁾»։ Որոշ ժամանակ անցնելուց յետոյ, երկի երբ վաճառն այլ ևս զպրոցի զեր չէր կատարում, գրատուն վրայ շինուած է զանգակատունը։

Գրատան արեւելեան պատի մօտ, ներսից, մի գերեզմանաքար կայ, որ արձանագրութիւն չունենալով՝ յայտնի չէ թէ ում շիրիմն է։ Գրատան յատակն այժմ հողով է ծածկուած. երկարութիւնը, ինչպէս և լայնութիւնը 10 արշին է։ Արեւելեան, հարաւային և հիւսիսային պատերի մէջ զոյգ զոյգ լուսամուտներ կան։

Ջանգակատան երկրորդ յարկի մուտքն արտաքուստ է, արեւմտեան կողմից. քարեայ աստիճաններով բարձրանալով՝ մտնում ենք երկրորդ յարկը, որ կամարակապ է, կաթուղիկէով և զմբէթածածկ. զմբէթն այժմ չկայ։ Հիւսիսային և հարաւային պատերի մէջ կան լուսանցքներ, որոնք սիւներով բաժանուած են երկու մասի։ Արեւելեան պատի մէջ միմեանց կից շինուած են երկու պատարագամատոյց խորաններ. յատակը կազմում է ստորին յարկի տանիքը, որի մէջ բացուածքներ կան, որոնք միմեանց հետ հաղորդակցութիւն ունին։

Արեւելեան պատի վրայ կարգացուած է հետեւեալ արձանագրութիւնը.

«Կիսման Աստուծոյ ի թվին հայոց ԶԽ Դ) — 740 հայոց և 1291 փրկչական պարոնութեան Խորիշ (?) խաթունին և եղբայր իւրոց Արղութին և Թա. . . (?) ամուսին որդոց Գարիմաղին (?) և որդոյ մեծին Ումէկին ու այլ որդոյ խաթունին մեք Բ (2) եղբարքս . . . սապետ . . . (?) վդ. և Կարապետ եղաք ի հիմն ի վերայ եղեալ հիման և շինեցաք զանգակատուն և եկեղեցի յանուն սր. Հրեշտակապետացն Գարբիէլի և Միքայէլի սակաւ ընչիւք ու քեզոյն մեր իգնատոսի արդեամբ բազմաւք վերադրին պատրոնացն զբաք պարիսպ շուրջ եկեղեցոյս և այլ աշխատութիւնս ըստ մերում կարի և Սարգ. . . (?) վարդապետ հայր վանիցս և միաբանքս հաստատեցին տարին . . . (?) պատարաք որ յեկեղեցին . . . սապետ (?) վարդապետին և Կարապետին սահմանեցին, արդ աղաչեմ ասենայն ժառանգաւորդ յիշման արժանի աննէք զամենայն աշխատեալս ի սմա ևս առաւել Զաքուն (?) և զԳրիգորն»։

Այս արձանագրութիւնից արդէն պարզ երևում է՝ առաջին, որ զանգակատունը շինուել է ուրիշ շէնքի վրայ — շէնքը ի հիմն ի վերայ եղեալ հիմանս. երկրորդ, որ այդ սեղի է ունեցել վանքի հիմնարկութիւնից հարիւր տարի յետոյ, երրորդ, որ երկրորդ

¹⁾ «ժինեաց և գրատուն մի զեղեցկաւն յարկոք, արեւստաւոր սնկով զհիւսն Միքիթար, որ ի բազում իրս աշխատ եղև իկեղեցեացն և վանիցն»։ Եղբ, էջ 129։

²⁾ Վանքի սկզբնաւորութիւնից ուրեմն ճշտ հարիւր տարի յետոյ։

յարկի մէջ զանաւան խորանները կողում են Գաբրիէլ և Միքայէլ հրեշտակապետների անուններով: Ափսոս, որ հիմնադիր վարդապետներից մէկի և այդ ժամանակուայ վանահօր անունները չեն կարգադրուում. ըստ Կիրակոս պատմագրի յիշած անունների՝ մօտաւորապէս այս միջոցին վանահայր պէտք է եղած լինի Յովսէփոս Երկրորդ յարկի տարածութիւնը արեւելքից—արեւմուտք 7 արշին է, իսկ հարաւից—հիւսիս 10 արշին 4 վերշոկ. բարձրութիւնը 10 արշին 2 վերշոկ. խորաններից իւրաքանչիւրի երկարութիւնն է 2 արշին 8 վերշոկ, լայնութիւնը 1 արշին 14 վերշոկ. բարձրութիւնը 3 արշին ու կէս:

VII

ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ

Վանքի հանդէպ, հարաւային կողմից, բլրակի վրայ կառուցուած է մի փոքր ապաշէն եկեղեցի սուրբ Գէորգի անունով. թէ արապոցուստ և թէ ներքուստ եկեղեցին շինուած է սրբատաշ քարով. թէ պատերի, թէ կաթուղիկէի և թէ զմրէթի քարերից շատերն այժմ թափուած են, արտաքուստ, կաթուղիկէի շուրջն արձանագրուած է.

«ԶԳ—703 հայոց և 1254 փրկական թվ. Տէր Աստուած ողորմեա Խաչատուր վարդապետի ու Բարսեղին շինողաց եկեղեցւոյս և տմենայն աշխատողացն ի սմա ամէնն»:

Կիրակոս պատմագրի ասելով Բարսեղը Խաչատուր վարդապետի եղբայրն է. պատմագիրն այս եկեղեցու շինութիւնը ռուբհարիւր երեքս (1854 փրկական) թուին է նշանակում¹⁾, այն ինչ արձանագրութիւնը 703 թիւն է կրում: Այս թիւրիմացութիւնը մինք վերագրում ենք Կիրակոս Գանձակեցու պատմութիւնը հրատարակողի սխալմունքին²⁾. որովհետեւ ինքը պատմագիրն այդ թուականին կենդանի չէր կարող լինել. Կիրակոսն իւր պատմութիւնը շարունակում է մինչև 967—714 հայոց և 1265 փրկական թիւը. այդ մէկ. երկրորդ՝ իւր իսկ վկայութեամբ Կիրակոսն աշակերտել և զործակցել է Վանական վարդապետին—մանրամասն

¹⁾ «Եւ յաւերախտ ետէ՛ թուին Խաչատուր վարդապետն, և եղբայր իւր Բարսեղն, շինեաց եկեղեցի մի երեքերանի, հանդէպ զանցին, զմրէթուք, յունեւ որոյն ճէրքայալ նոյնը, էջ 130:

²⁾ Մեր ձեռքն է Մոսկովայի հրատարակութիւնը. արդեօք նոյն սխալը կրկնուած է Վանականի հրատարակութեան մէջ: